ՀՀՏԱՐԱԾՔԱՅԻՆԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևան, Կառավարական տուն 3

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ N 341

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնի վերաբերյալ

ՀՀ Արմավիրի մարզի Հայթաղի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ
(ծածկագիր՝ 3.1-1)

ա) Իր անմիջական ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է մշակութային և երիտասարդության հետ կապված գործընթացներ, ղեկավարում է համայնքի սպորտային կյանքը։
բ/ Նպաստում է մարզական կյանքի աշխուժացմանը, ազգային ծեսերի, տոների կազմա-կերպմանը, իրականացնում է պատմա-մշակութային արժեքների պահպանության ուսումնա-սիրություններ և առաջարկություն է ներկայացնում իր անմիջական ղեկավարին։
գ/ Անմիջական աշխատանքային ու գործնական կապի մեջ է համայնքային ենթակայության, մշակութային և սպորտային հիմնարկությունների հետ /դպրոցներ, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, մարզադպրոցներ, մշակութային խմբակներ, սպորտային կազմակերպություններ և այլն/, օժանդակում է մրցույթների, փառատոնների, մեծարման երեկոների կազմակերպմանը, առաջարկու-թյուններ է ներկայացնում բաժնի պետին տվյալ բնագավառների աշխատանքների բարելավման ուղղությամբ։
դ/ Իր անմիջական ղեկավարի հանձնարարությամբ և իր լիազորությունների շրջանակներում առաջարկություններ է ներկայացնում իր կողմից սպասարկվող բնագավառի աշխատանքների արդյունավետության և բարելավման ուղղությամբ։
ե) կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.
զ) ապահովում է բաժնի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.
է) հետևում է բաժնի պետի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում, կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է բաժնի պետին.
ը) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.
թ) իրականացնում է քաղաքացիների հերթագրում բաժնի պետի մոտ ընդունելության համար.
ժ) բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.
ի) բաժնի պետի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան.
լ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ։

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) ունի առնվազն միջնակարգ կրթություն.

բ) ունի ,Համայնքային ծառայության մասինե, ,Տեղական ինքնակառավարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.
դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնների առաջացման հիմքերիի վերացման ժամկետն է՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնները մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների (մասնակիցներիցմեկի) կողմից զբաղեցնելը

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2020 թվականի հոկտեմբերի 1-ը ժամը 10:00:
Խնդրում ենք դիմումներն ուղարկել միայն էլեկտրոնային տարբերակով՝ e-request.am էլեկտրոնային հասցեին:
Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարողեն դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ (ք. Երևան, Կառավարական տուն N 3, հեռ. 010-515131):

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
աշխատակազմ